



Նկարները՝ ©©©©©©©©©©

ԻՆՉՊԵՍ Է ՀՈԳԻՆ ՕԳՆՈՒՄ (ԵՎ ԿՕԳՆԻ) ՁԵԶ ՍՊԱՍԱՎՈՐԵԼ

Սպասավորելու քահանայության հանձնարարությունը, որը տրվում է տղամարդուն կամ կնոջը, ընդգրկում է հայտնություն ստանալու իրավունքը:

Սպասավորելու և ծառայելու կանչը, նույնիսկ սիրել այն-պես, ինչպես Փրկիչն էր սիրում, երբեմն կարող է դժվար թվալ, հաստկապես, երբ հարկավոր է օգնել մարդկանց, ում մենք այդքան լավ չենք ճանաչում: Սպասավորության միլիոնավոր եղանակների առկայության պարագայում, մենք մտածում ենք, թե ինչպես կարող ենք լավագույնս օգնել նրանց, ում մեզ հանձնարարել են օգնել:

Մենք երկար չպետք է մտածենք, քանի որ մեր անկեղծ ջանքերը կառաջնորդվեն Սուրբ Հոգու կողմից:

«Ծառայելու ձեր սրբազան հանձնարարությունը ձեզ տալիս է ոգեշնչման աստվածային իրավունքը», - ասել է Երիտասարդ Կանանց գերագույն նախագահ Քույր Բոննի Հ. Քորդոնը: «Դուք կարող եք վստահաբար փնտրել այդ ոգեշնչումը»:¹

Երբ մենք ձգտում ենք ծառայել այնպես, ինչպես Փրկիչն էր ծառայում, մենք կարող ենք առաջնորդվել նույն Հոգով, որն առաջնորդում էր Նրան: Մա հաստկապես

ճիշտ է, երբ ծառայում ենք սպասավորության հանձնարարություններով, որոնք տրվում են եպիսկոպոսի քահանայության բանալիների իշխանության ներքո: Միև վեց առաջարկներ Հոգով սպասավորելու համար:

Ինչպե՞ս կարող եմ սպասավորելիս Հոգին ինձ հետ ունենալ:

- **Առաջնորդություն խնդրեք:** Երկնային Հայրն ուզում է, որ մենք շփվենք Իր հետ աղոթքի միջոցով: Աղոթքը ոչ միայն մոտեցնում է մեզ Նրան, այլև ապահովում է «օրհնությունները, որոնք Աստված կամենում է շնորհել, բայց որոնք մենք պետք է խնդրենք, որպեսզի ստանանք»:² «Երբ մենք աղոթենք և ձգտենք հասկանալ նրանց, - ասել է քույր Քորդոնը, - ես վկայում եմ, որ Երկնային Հայրը կառաջնորդի մեզ և Նրա Հոգին կլինի մեզ հետ»:³

- **Մի՛ սպասեք հուշումի:** Ակտիվ եղեք: «Ջերմեռանդներ գրավված» եղեք (Վարդապետություն և Ուխտեր 58.27), և կտեսնեք, որ ձեր ջանքերը առաջնորդվում և բազմապատկվում են: «Ծառայությամբ ու աշխատանքով առաջ շարժվելը հայտնություն ստանալու համար կարևոր միջոց է», - ասել է Առաջին Նախագահության Առաջին Խորհրդակալ Նախագահ Դավիթ Հ. Օուքսը: «Մուրբ գրությունների ուսումնասիրության ընթացքում ես նկատել եմ, որ Աստծո զավակները հայտնության մեծ բաժին ստանում են այն ժամանակ, երբ շարժման մեջ են, և ոչ թե նստած իրենց բնակարաններում սպասում են, թե Տերը երբ է ասելու, թե որն է լինելու նրանց առաջին քայլը»:⁴

Ինչպե՞ս ճանաչեմ սպասավորելու հուշումները:

- **Լսեք Մորմոնի խորհուրդը:** Մենք չպետք է լարվենք ու անհանգստանանք՝ արդյոք ինչ-որ միտք, որ ծագել է, հուշում էր, թե ոչ: Այն դեպքում, երբ դա իմանալու համար մենք ունենք Մորմոնի տված բանալին. եթե ձեզ մոտ միտք է առաջանում, որը հորդորում է ձեզ բարիք գործել և հավատալ, կամ օգնել մարդկանց՝ հավատալ Քրիստոսին, դուք կարող եք իմանալ, որ դա Աստծուց է (տես Մորմոնի 7.16):
- **Մի անհանգստացեք դրա համար:** «Պարզապես ցատկեք լողավազանի մեջ և լողացեք,- ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլանդը: Եվ գնացեք դեպի կարիքավորները: Մի կաշկանդվեք, մտածելով՝ արդյոք պիտի մեջքի՞ վրա լողաք, թե՞ շնալող տաք: Եթե մենք հետևենք ուսուցանված հիմնական սկզբունքներին, գործադրենք քահանայության բանալիները և փնտրենք Մուրբ Հոգու առաջնորդությունը, մենք չենք ձայնակոչվի»:⁵

Ո՞րն է հուշումին հետևելու լավագույն արձագանքը:

- **Անմիջապես:** Քույր Մյուզան Բեդնարը (Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի կինը) հուշումներին հետևելու հրաշալի օրինակ է ծառայել: Աղոթելուց հետո, որ «մեր հոգևոր աչքերը բացվեն, որպեսզի տեսնենք կարիքավորներին», կինս նայում է հավաքվածներին և հաճախ «զգում է հոգևոր մղում՝ այցելելու կամ զանգահարելու որոշակի մարդու», - ասել է Երեց Բեդնարը: «Եվ երբ Քույր Բեդնարը այդպիսի տպավորություն է ստանում, նա անմիջապես արձագանքում է և հնազանդվում: Հաճախ այնպես է լինում, որ հենց ասվում է եզրափակիչ «ամեն» բառը, նա մոտենում է զրուցելու որևէ դեռահասի հետ, կամ գրկախառնվում է որևէ քրոջ հետ, կամ, տուն վերադառնալու պես, վերցնում է հեռախոսը և զանգահարում ինչ-որ մեկին»:⁶
- **Համարձակ:** Մերժվելու վախը, ամաչկոտությունը, անհամապատասխանությունը կամ անհարմար վիճակում հայտնվելը կարող են խանգարել մեզ, որ հետևենք սպասավորության հուշումին: «Տարբեր

ժամանակներում և ձևերով մենք բոլորս անհամապատասխան, անորոշ, թերևս անարժան ենք զգում», - ասել է Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Վ. Գոնգը: «Մակայն, Աստծուն սիրելու և մեր մերձավորին ծառայելու հավատարիմ ջանքերում մենք կարող ենք զգալ Աստծո սերը և անհրաժեշտ ոգեշնչում՝ նրանց և մեր կյանքի համար նոր և ավելի սուրբ եղանակներով»:⁷

Մի եղբայր պատմել է, թե ինչպես է հապաղել օգնության հասնել մի մարդու, ում կինն ինքնասպանության փորձ էր կատարել: Վերջապես, նա այդ մարդուն հրավիրել է միասին ճաշելու: «Մակայն, երբ ես ասացի. «Ձեր կինը փորձել է ինքնասպան լինել: Կարծում եմ, դա շատ ճնշող ազդեցություն է ունեցել ձեր վրա: Ցանկանո՞ւմ եք խոսել այդ մասին», - նա բացահայտ արտասպեց: Մենք շատ նուրբ ու անձնական խոսակցություն ունեցանք, և նշանակալից մտերմություն ու վստահություն ձևավորվեց մեր մեջ ընթացքում»:⁸

ՓՐԿԻՉԻ ՕՐԻՆԱԿ

Փրկիչը պատրաստվել էր Իր առաքելության համար: «Այն Յիսուսին որ Նազարեթիցն է, թե ինչպես նորան Աստուած Սուրբ Հոգով եւ զորութիւնով օծեց. Որ ման եկաւ բարի անելով» (Գործք Առաքելոց 10.38): Նա «Սուրբ Հոգիով լցուած» էր և «Հոգիով» էր առաջնորդվում (Ղուկաս 4.1): Քրիստոսն, անշուշտ, քայլեց բարիք գործելով, նախքան Սուրբ Հոգով օծվելը, բայց Սուրբ Հոգին ստանալը և ոգեշնչման այդ իրավունքը Նրա ծառայության կարևոր մասն էր, ճիշտ այնպես, ինչպես դա մեր ծառայության կարևոր մասն է:

ԳՈՐԾԵԼՈՒ ՆՐԱԿԵՐ

Երբ անցնում եք ձեր ամենօրյա ծառայություններին, աղոթքով փնտրեք և արձագանքեք Սուրբ Հոգու հուշումներին: Հիշեք, որ ձեր ծառայելու ժամանակ Երկնային Հայրը կօրհնի ձեզ և նրանց, ում դուք ծառայում եք:

ՆՂՈՒՆԵՐ

1. Բոննի Հ. Քորդոն, «Հովիվ դառնալ», *Լիսինուս*, նոյեմբեր 2018, 76:
2. Աստվածաշնչի բառարան, «Աղոթք»:
3. Բոննի Հ. Քորդոն, «Հովիվ դառնալ», 76:
4. Դավիթ Հ. Օուքս, «Իր իսկ ժամանակին, Իր իսկ ձևով», *Լիսինուս*, օգոստոս 2013, 24:
5. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հաշտության սպասավորությունը», *Լիսինուս*, նոյեմբեր 2018, 77:
6. Դեյվիդ Ա. Բեդնար, «Quick to Observe», *Ensign or Liahona*, Dec. 2006, 17–36:
7. Ջեֆրի Վ. Գոնգ, «Մեր հավատի կրակը», *Լիսինուս*, նոյեմբեր 2018, 42:
8. Բոննի Հ. Քորդոն, «Հովիվ դառնալ», 76: